Հավելված
«Մասնագիտական կրթության
որակի ապահովման ազգային կետնրոն»
հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2025 թվականի մայիսի 5-ի թիվ 3-Լ՝ որոշման

ԿԱՐԳ
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 978-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը» (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ):

2. Փորձագիտական խումբը ձևավորվում է հավատարմագրման նպատակով ՈԱԱԿ դիմած բուհերի և մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) Հայաստանի Հանրապետության հավատարմագրման չափանիշներին համապատասխան ինստիտուցիոնալ և ծրագրային արտաքին գնահատում (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացնելու համար:

3. Փորձագիտական խմբի աշխատանքները կարգավորվում են Հավատարմագրման կարգով, ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով (այսուհետ՝ Ձեռնարկ),
«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի էթիկայի և վարքագծի կանոններով ու սույն կարգով սահմանված լիազորությունների սահմաններում:

4. Փորձագիտական խումբն իր գործունեությունն իրականացնում է օրինականության, օբյեկտիվության, անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

5. Սույն կարգով սահմանվում են փորձագիտական խմբի ձևավորման ընթացակարգը, փորձագետներին ներկայացվող պահանջները, փորձաքննության ընթացքում փորձագիտական խմբի, համակարգողի իրավունքներն ու պարտականությունները, փորձագիտական խմբի լիազորությունները, դրանց դադարեցումը, փորձագիտական աշխատանքների մշտադիտարկումն ու գնահատումը:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Փորձագետների հավաքագրումը, պատրաստումը և ընտրությունը

6. ՈԱԱԿ փորձագիտական շտեմարանում ընդգրկվելու համար անհրաժեշտ քայլերը.
   1) գրանցվել շտեմարանում (http://forms.anqa.am),
   2) լրացնել փորձագետի վերաբերյալ տվյալների հարցաշարը,
   3) մասնակցել փորձագետների համար կազմակերպվող դասընթացներին և վերապատրաստումներին:

7. Փորձագետների թեկնածուները հավաքագրվում են.
   1) ուսումնական հաստատությունների ինքնավերլուծության խմբերում ներգրավված աշխատակիցներից,

2) հավատարմագրման գործընթացներին մասնակցած փորձագետների առաջարկությամբ ոլորտային մասնագետներից,

3) ուսումնական հաստատությունների որակի ապահովման ղեկավարների առաջարկությամբ հրավիրյալ մասնակիցներից,

4) ՈԱԱԿ-ում կազմակերպվող կլոր սեղանների (թեմատիկ, ոլորտային) անցկացման արդյունքում ընտրվող մասնակիցներից,

5) իրենց դասավանդման փորձը հետազոտող և դրա վերաբերյալ հոդվածներ հրապարակած դասախոսներից,

6) գիտության, տնտեսության, արդյունաբերության ոլորտում հայտնի ոլորտային մասնագետներից կամ կրթության ոլորտում կառավարման փորձ ունեցող անձանցից,

7) ուսումնական հաստատությունների հետ ակտիվ համագործակցող գործատուներից:

8. ՈԱԱԿ-ը պարբերաբար կազմակերպում է փորձագիտական կարողություններին նվիրված դասընթացներ փորձագետների շտեմարանում ընդգրկված մասնագետների համար:

9. Դասընթացներն ավարտվում են մասնակիցների կարողությունների գնահատմամբ՝ համաձայն սահմանված ձևաչափ-սանդղակի:

10. Գնահատման սանդղակը ներառում է.

1) հաստատության կառավարման և ՄԿԾ-ների բարելավմանն ուղղված նորարարական լուծումների առաջադրումը,

2) արդյունահենք հարցեր տալու կարողությունը,

3) փորձագիտական զեկույց գրելու հմտությունները,

4) հաղորդակցման և թիմային աշխատանքի կարողությունը:

11. Դրական գնահատված մասնակիցներն ընդգրկվում են ՈԱԱԿ-ի փորձագետների թեկնածուների ցանկում:

12. Փորձագիտական խումբը կազմվում է 3-7 փորձագետներից:

13. Փորձագիտական խմբում ընդգրկվում են

1) պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,

2) կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչներ,

3) մասնագիտական կամ տնտեսության տվյալ ոլորտի ներկայացուցիչներ/գործատուներ, (ծրագրային հավատարմագրման դեպքում՝ պարտադիր սկզբունքով),

4) քոլեջների և բուհերի սովորողներ,

5) միջազգային փորձագետներ (բուհերի դեպքում՝ պարտադիր սկզբունքով):

14. Միջազգային փորձագետն ընտրվում է կրթության որակի ապահովման կամ միջազգային մասնագիտացված կազմակերպություններից:

15. ՈԱԱԿ-ը տեղացի և միջազգային փորձագետների շտեմարանից ընտրում է փորձագիտական խմբի 7-10 հոգուց բաղկացած փորձագետների թեկնածուների կազմը և ներկայացնում Հավատարմագրման հանձնաժողովի համաձայնեցմանը: Հանձնաժողովի կողմից համաձայեցված ցանկից ՈԱԱԿ-ը ձևավորում է փորձագիտական խմբի նախնական կազմը և ուղարկում ուսումնական հաստատության համաձայեցման երկու շաբաթվա ընթացքում:

16. Ուսումնական հաստատությունը գրավոր ներկայացնում է իր համաձայնությունը կամ առարկությունը: Եթե փորձագիտական խմբի թեկնածուներից մեկի կամ մի քանիսի վերաբերյալ առարկություն կա, ապա ուսումնական հաստատությունը պարտավոր է ներկայացնել գրավոր հիմնավորված բացարկ՝ նշելով առարկության պատճառները, այդ թվում՝ շահերի բախման հնարավոր հիմնավորումները:

17. ՈԱԱԿ-ը ուսումնասիրում է ուսումնական հաստատության կողմից ներկայացված բացարկը, և դրա հիմնավորվածության բացակայության դեպքում փորձագիտական խմբի կազմը չի փոփոխվում, իսկ հավատարմագրման գործընթացը շարունակվում է սահմանված կարգով:

18. ՈԱԱԿ-ը բացարկն ընդունելու դեպքում փորձագիտական խմբի նախնական կազմում կատարում է համապատասխան փոփոխություն՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ցանկից ընտրելով մեկ այլ թեկնածուի, իսկ ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագիրը երկարաձգվում է մեկ ամսով: Մեկամսյա ժամկետի ավարտից հետո փորձագիտական խմբի նոր կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողությունը դադարեցվում է:

19. ՈԱԱԿ-ը պայմանով հավատարմագրում ստացած ուսումնական հաստատության ներքին գնահատման արդյունքներն ստանալու օրվանից 1 շաբաթվա ընթացքում փորձագետների շտեմարանից ընտրում է 3-6 հոգուց բաղկացած փորձագիտական խմբի կազմ, որտեղ հնարավորության դեպքում ներգրավվում է պայմանով հավատարմագրում ստացած ուսումնական հաստատության փորձագիտական խմբի անդամ: Կազմը ներկայացնում է Հավատարմագրման հանձնաժողովի համաձայնեցմանը: Համաձայնեցումից հետո ձևավորվում է 3 հոգուց բաղկացած փորձագիտական խումբ:

20. Համաձայնեցված կազմն ուղարկում է ուսումնական հաստատություն, որը երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է իր համաձայնությունը կամ առարկությունը:

21. Փորձագիտական խմբի անդամների թվաքանակը և համամասնությունը կախված է փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության ծավալից, առանձնահատկություններից, ինչպես նաև հավատարմագրման տեսակից:

22. Հանձնաժողովի հետ համաձայնեցված փորձագետների խմբի վերջնական կազմը, ուսումնական հաստատության հետ համաձայնեցվելուց հետո, հաստատվում է ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

23. Փորձագիտական խմբի անդամներից մեկը ՈԱԱԿ-ի կողմից նշանակվում է խմբի ղեկավար:

24. Փորձագիտական խմբի անդամների կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կարգով և ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրերով:

2.2 Փորձագիտական խմբին ներկայացվող պահանջները

25. Ձևավորված փորձագիտական խումբը պետք է ունենա.

1) ինստիտուցիոնալ կամ մասնագիտության կրթական ծրագրերի գնահատում իրականացնելու կարողություն,

2) կառավարման և վարչարարության, քաղաքականությունների և ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման կարողություն,

3) դասավանդման և հետազոտության իրականացման փորձառություն (առնվազն 3 տարի՝ բացառությամբ ուսանող-փորձագետների),

4) որակի ներքին ապահովման գործընթացների գնահատման և տվյալների վերլուծության կարողություն:

26. Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար տեղացի փորձագետները պետք է ունենան գիտական աստիճան, իսկ մասնագիտական ուսումնական հաստատությունների համար՝ առնվազն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան:

27. Փորձագիտական խմբերում ներգրավում են այն ուսանողները, ովքեր սովորում են բակալավրիատի 2-րդ և բարձր կուրսերում կամ մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում կամ քոլեջների 2-րդ և բարձր կուրսերում և ունեն հասարակական գործունեության փորձ:

28. Փորձագիտական խմբի տեղացի փորձագետները պետք է գերազանց տիրապետեն գրական հայերենին (գրավոր և բանավոր):

29. Տեղացի փորձագետներից առնվազն մեկը պարտադիր պետք է տիրապետի անգլերենին:

3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Փորձագիտական խմբի գործառույթներն են.

1) ուսումնասիրել և գնահատել ուսումնական հաստատության ներկայացրած ինքնավերլուծությունը և կից փաստաթղթերի փաթեթը, այդ թվում էլեկտրոնային հարցաշարը,

2) իրականացնել դասալսումներ, պրակտիկաների և ռեսուրսների դիտարկում,

3) իրականացնել փորձագիտական այց, մասնակցել փորձագիտական խմբի բոլոր հանդիպումներին, փակ քննարկումներին և որոշումների կայացման գործընթացին,

4) պատրաստել նախնական փորձագիտական զեկույց՝ հիմք ընդունելով հաստատության կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը, ներկայացված ինքնավերլուծությունը, նախնական գնահատումը և փաստաթղթերի ուսումնասիրությունները, ինչպես նաև փորձագիտական այցի արդյունքները,

5) մասնակցել զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից ներկայացրած դիտողությունների և առաջարկությունների քննարկմանը,

6) պատրաստել փորձագիտական վերջնական զեկույց,

7) տալ եզրակացություն ուսումնական հաստատության ներկայացրած փորձագիտական զեկույցում նշված թերությունների կամ թերացումների վերացման ծրագրի նախնական տարբերակի վերաբերյալ,

8) հանդիպել Հավատարմագրման հանձնաժողովի նախագահի կողմից կազմված մինչև 3 հոգուց բաղկացած հանձնաժողովի անդամների հետ:

31. Փորձագիտական խմբի անդամը.

Իրավունք ունի.

1) փորձաքննության ողջ ընթացքում ըստ անհրաժեշտության համակարգողի միջոցով ուսումնական հաստատությունից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն,

2) առաջարկություններ անել փորձագիտական այցի ժամանակացույցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

3) ՈԱԱԿ-ին տալ արձագանք փորձաքննության ողջ գործընթացի վերաբերյալ:

Պարտավոր է.

1) մինչև փորձագիտական խմբում ընդգրկվելը ՈԱԱԿ-ին գրավոր տեղեկացնել տվյալ ուսումնական հաստատության հետ շահերի բախմանը հանգեցնող ցանկացած խնդրի վերաբերյալ,

2) փորձագիտական խմբում ընդգրկվելուց հետո ստորագրել գաղտնիության և շահերի բախման բացառման մասին պարտավորագիր,

3) անշեղորեն հետևել ՈԱԱԿ էթիկայի և վարքագծի կանոններին փորձաքննության ամբողջ ընթացքում:

32. Փորձագիտական խմբի ղեկավարը պատասխանատվություն է կրում փորձաքննության ողջ գործընթացի պատշաճ անցկացման և փորձագիտական խմբի աշխատանքների համար:

33. Խմբի ղեկավարը պարտավոր է նաև.

1) այցի պլանի համաձայնեցման նպատակով ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարի և համակարգողի հետ կատարել նախապատրաստական այց ուսումնական հաստատություն,

2) ղեկավարել փորձագիտական այցի բոլոր հանդիպումները, փակ քննարկումները և որոշումների կայացման գործընթացները,

3) հետևել ժամանակացույցին, պահպանել աշխատակարգը (հետևել հանդիպումների տևողությանը, փորձագետների կողմից նախատեսված բոլոր հարցերի ներկայացմանը և դրանց պարզաբանմանը),

4) պատրաստել փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ դիտարկումների պատասխան:

4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Փորձագիտական խմբի աշխատանքների կազմակերպման և ուսումնական հաստատության փորձաքննության համակարգման համար ՈԱԱԿ տնօրենի հրամանով նշանակվում է 1 կամ 2 համակարգող:

35. Համակարգողն ապահովում է փորձագիտական խմբի ու ուսումնական հաստատության միջև հաղորդակցությունը, Հավատարմագրման կարգով ու Ձեռնարկով սահմանված ընթացակարգերի պահպանումը:

36. Համակարգողն պատասխանատու է փորձաքննության ընթացակարգի և գնահատման սկզբունքների պահպանման համար:

37. Համակարգողն իրավունք չունի տալ գնահատականներ, կատարել դատողություններ հաստատության գործունեության կամ մասնագիտության կրթական ծրագրի վերաբերյալ:

38. Համակարգողը պարտավոր է՝

1) հետևել գործընթացների ընթացքին և արդյունավետ իրականացմանը (քննարկումների կազմակերպում, տարընկալումների հարթում),

2) համակարգել ողջ գործընթացը և պաշտպանել փորձագիտական խմբի անդամների իրավունքները,

3) կատարել իրավիճակի վերլուծություն, չպլանավորված դեպքերում որոշումներ կայացնել և լուծումներ տալ,

4) փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել այցի ժամանակացույցի նախագիծը և համաձայնեցնել ուսումնական հաստատության հետ,

5) կազմակերպել նախնական այց ուսումնական հաստատություն, ստուգել ուսումնական հաստատության պատրաստվածությունը փորձագիտական այցին (տրամադրվող աշխատասենյակ, կազմ, տեխնիկա և այլն),

6) օժանդակել փորձագիտական խմբին փորձագիտական զեկույցի պատրաստման գործընթացում,

7) զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ կազմակերպել ուսումնական հաստատության ներկայացրած դիտողությունների ու առարկությունների քննարկումներ փորձագիտական խմբի անդամների, ինչպես նաև ուսումնական հաստատության և խմբի հետ,

8) օժանդակել փորձագիտական խմբին փորձագիտական վերջնական զեկույցի պատրաստման գործում,

9) հաստատությանը տրամադրել խորհրդատվություն զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կազմման ձևաչափի վերաբերյալ և կազմակերպել փորձագիտական խմբի կողմից այդ ծրագրի գնահատումը,

10) կազմակերպել և մասնակցել մինչև 3 հոգուց բաղկացած Հավատարմագրման հանձնաժողովի անդամների հանդիպումներին փորձագիտական խմբի և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ,

11) ապահովել փորձագիտական խմբի աշխատանքների և իրականացվող գործընթացների համապատասխանությունը սույն կարգի և Ձեռնարկի պահանջներին:

5. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

39. Փորձաքննության ողջ ընթացքում փորձագետների աշխատանքները մշտադիտարկվում և գնահատվում են ՈԱԱԿ տնօրենի և Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժի ղեկավարի կողմից:

40. ՈԱԱԿ-ն իրականացնում է փորձագետների ընթացիկ աշխատանքների մշտադիտարկում հանդիպումների, փորձագիտական այցի և զեկույցի դիտարկման միջոցով:

41. Մշտադիտարկման ձևերի մանրամասն նկարագրությունը և փորձագետների աշխատանքի գնահատումը սահմանված է Ձեռնարկում:

6. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

42. Փորձագիտական խմբի անդամի լիազորությունները դադարում են.

1) եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, նրա նկատմամբ կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,

2) եթե ստանձնել է հավատարմագրվող ուսումնական հաստատությունում կառավարման կամ շահերի բախում առաջացնող վարչական պաշտոն,

3) մահվան հիմքով:

43. Փորձագիտական խմբի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝

1) իր դիմումի համաձայն,

2) սույն կարգով սահմանված պարտականությունները թերի կատարելու կամ չկատարելու դեպքում,

3) ՈԱԱԿ-ի հետ կնքված պայմանագրի, գաղտնիության և շահերի բախման բացառման մասին պարտավորագրի պահանջները խախտելու դեպքում,

4) ՈԱԱԿ-ի էթիկայի և վարքագծի կանոնները խախտելու դեպքում,

5) Պայմանագրի դրույթները խախտելու դեպքում:

Փորձագետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումը ընդունվում է կողմերի համաձայնությամբ:

44. Փորձագիտական խմբի անդամի փոփոխություն սույն կարգի 43-րդ կետերում սահմանված դեպքում հնարավոր է փորձաքննության նախնական գնահատման փուլում: Դրան հաջորդող փուլերում փորձաքննության գործընթացը շարունակվում է փորձագիտական խմբի տվյալ անդամի բացակայությամբ գործընթացն իրականացնելու հնարավորության դեպքում, իսկ անհնարինության

դեպքում՝ դադարեցվում: Փորձաքննության գործընթացի դադարեցման ընթացակարգը սահմանված է Ձեռնարկում:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

45. Սույն կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի կողմից՝ ՈԱԱԿ տնօրենի ներկայացմամբ:

46. Ուժը կորցրած ճանաչել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 23-ի N 14.1/[97088]-11 որոշմամբ հաստատված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգը:

47. Սույն կարգն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: